ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ • НАШИ ЮБИЛЯРЫ

ԲՈՐԻՍ ՊԻՈՏՐՈՎՍԿԻ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ ՍՍՀՄ և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՌՍՖՍՀ կուլտուրայի և ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, Պետական էրմիտաժի գիտնական քարտուղար Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկու ծննդյան 80-ամյակը:

Բ. Բ. Պիոտրովսկին ծնվել է 1908 թ. փետրվարի 14-ին Պետերբուրգում, մտավորականի ընտանիքում: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո 1925 թ. ընդունվում է Լենինգրադի պետական համալսարանը և 1930 թ. ավարտում նրա պատմա-լեզվագիտական ֆակուլտետը: Այստեղ նրան վիճակվեց աշակերտել այնպիսի ճանաչված գիտնականների, ինչպիսիք էին արևելագետ Վ. Վ. Ստրուվեն և հնագետ Ա. Ա. Միլլերը, Նիկողայոս Մառը և Հովսեփ Օրբելին, իսկ Պետական էրմիտաժում, ուր նա հաճախում էր դեռևս աշակերտական տարիներին՝ եգիպտագետ Ն. Դ. Ֆլիտները: Գիտական նման միջավայրում Բ. Պիոտրովսկին վերջնականապես կողմնորոշվում է գեպի արևելագիտությունը և հնագիտությունը:

1920 թ., դեռևս համալսարանը չավարտած, Բ. Պիոտրովսկին աշխատանքի է ընդունվում Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայում (ԴԱՄԿ), իսկ 1931 թ.՝ Պետական էրմիտաժում ուր և ծավալում է գիտական բեղմնավոր գործունեություն: Արդեն ուսանողական տարիներին նա կատարել էր իր գիտական ընտրությունը. հրապուրված լինելով հին Եգիպտոսով, երիտասարդ Բ. Պիոտրովսկին դառնում է Եգիպտոսի պատմությանը և մշակույթի հարցերին նվիրված մի քանի հետաքրքիր հոդվածների հեղինակ, որոնք իրենց վրա են սևեռում նրա ուսուցիչ Նիկողայոս Մառի ուշադրությունը:

Եգիպտոսի հնագիտությամբ և մշակույթով, բնականաբար, կարելի էր զբաղվել Եգիպտոսում, սակայն նման ձգտումը հնարավոր չէր իրագործել այդ տարիներին: Եգիպտոս մեկնել և աշխատել, Բ. Պիոտրովսկուն վիճակվում է ավելի ուշ, տարիներ անց:

Ն. Մառի խորհրդով իր գիտական հետազոտությունները Բ. Պիոտրովսկին ուղղում է դեպի Կովկաս և Անդրկովկաս: 1930-ական թթ. սկզբից նրա հետաքրքիրը սերտորեն կապվում է մեր Հայաստանի հետ: Ն. Մառը և Հ. Օրբելին Բ. Պիոտրովսկուն կողմնորոշեցին դեպի Ուրարտուն, նրա պատմությունն ու մշակույթը, որոնց ուսումնասիրությունը դառնում է Պիոտրովսկու կյանքի գլխավոր նպատակը:

1930 թ. և հաջորդ տարիներին էրմիտաժի գիտաշխատակիցներ Լևոն Գյուզալյանի և Անտոն Հաչյանի հետ Բ. Պիոտրովսկին զբաղվում է Հայաստան և ուսումնասիրում Սևանի ու Արտաշատի կիկլոպյան ամրոցները: Այս տարիներին է, որ տեղի է ունենում նրա առաջին հանդիպումը ուրարտական հուշարձանների հետ, որոնք կանխորոշեցին նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը: Հ. Օրբելու ղեկավարությամբ Ամբերդում աշխատելուց հետո, 1939 թ. Հրազդանի

ոսփիս գտնվող ուրարտական Թեյշեբայինի քաղաքի միջնաբերդում սկսվում են Արմենիի, ճնուրյունների պաշտպանության կոմիտեի և Պետական էրմիտաժի համատեղ պեղումները՝ Բորիս Պիոտրովսկու, Կարո Ղաֆադարյանի և Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ: Կարմիր բլուրի պեղումները, սրոշ ընդհատումներով (կապված պատերազմական տարիների հետ) շարունակվեցին մինչև 1967 թ. և Պիոտրովսկուն համընդհանուր ճանաչում բերեցին: Այդ պեղումները, անտարակույս, նշանավորեցին Ուրարտուի հնագիտության զարդացման նոր փուլը, քանի որ ուրարտական հնավայրերի մինչ այդ կատարված պեղումները Վանում, Թոփրախ-Կալեում և այլուր կրում էին ոչ սիստեմատիկ, կարճատև բնույթ:

Կարմիր բլուրում կատարված աշխատանքների շնորհիվ Բ. Պիոտրովսկին կարողացավ վերակենդանացնել մ. թ. ա. VII դարի ուրարտական ամրոցի ու քաղաքի ամբողջական պատկերը: Ուրարտական քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը, նյութական մշակույթը և արվեստը նոր լուսաբանություն ստացան, հնագիտական իրերեն ապացույցներով հիմնավորվեց քաղաքի տնտեսական կյանքի բարձր մակարդակը, որն իր հաստատումը գտավ նաև տեղում հայտնաբերված սեպագիր արձանագրություններով՝ քարե վեմերի և կավե աղյուսիկների վրա փորագրված: Նույն այս արձանագրությունների տվյալներով հարստացան Ուրարտուի կրոնի ու պաշտամունքի մասին մինչ այդ գոյություն ունեցող պատկերացումները:

Հիմնական արդյունքների թվարկումը կարելի է լրացնել այն խոշոր պրոբլեմների հիշատակումով, որոնք իրենց լուծումն ստացան Կարմիր բլուրի պեղումների տարիներին և որոնք կապված են Արարատյան դաշտի քաղաքային կենտրոնների հիմնադրման, նրանց գոյատևման ու անկման, Ուրարտուի և Միջագետքի, Փոքր Ասիայի ու սկյութական աշխարհի միջև մշակութային առնչությունների հետ:

Այս բոլորին աննահարին կլիներ հասնել, եթե չլիներ գիտական հիշտ աշխարհայացք և պեղման ստույգ գիտական մեթոդ, որոնց Բ. Պիոտրովսկին տիրապետում էր կատարելապես: Պեղումների ընթացքում բացահայտված նյութի ֆիքսացիան, գծագրումը, լուսանկարումը, չափագրումը կանգնած էին ժամանակի ամենաբարձր մակարդակի վրա: Գիտնականի դաշտային օրագրերը իրենց ճակիրն ոճով, դիպուկ, կարճ նկարագրություններով, որտեղ շարադրանքի ընդգրկունությունը հաջողությամբ մրցում է շարադրանքում պարունակված արժեքավոր մանրամասնությունների հետ, կարող են այսօր էլ շարժել իր հնագետ գործընկերների բարի նախանձը:

Զարմանալիորեն ստատ տեղեկություններ էր կորզում Պիոտրովսկին իր պեղած նյութերից. նրա համար կային առավել կարևոր և նվազ կարևոր նյութեր, բոլորն էլ կարևոր էին, ձմերուկի կորիզից մինչև ձիու արձանիկը:

Թեյշեբայինի ուրարտական ամրոցի անկման նկարագրությունը, որը նա վերարտադրել է զարմանալի հավատիությամբ, հնագիտական ռասյզ տվյալների հիման վրա, անկասկած պատկանում է հնագիտական գրականության լավագույն նմուշներին: Կարմիր բլուրի առաջին շրջանի պեղումների արդյունքները ամփոփվեցին ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությամբ լույս տեսած երեք պրակներում (Կարմիր բլուր 1, 1950. II, 1952. III, 1956): Լենինգրադում լույս տեսավ Կարմիր բլուր ալբոմը:

Պատերազմի առաջին տարիները Բորիս Բորիսովիչը անցկացրեց պաշարված Լենինգրադում: Հովսեփ Օրբելու գլխավորությամբ նա գործուն մասնակցություն ունեցավ էրմիտաժի արվեստի ու մշակույթի գանձերի փրկման աշխատանքներին: Երբ էրմիտաժի հարուստ նյութերը ուղարկվեցին խորը թիկունք, ապահով տեղ, նա Հ. Օրբելու և մի շարք այլ աշխատակիցների հետ տեղափոխվեց Երևան, որտեղ ծավալեց գիտական եռանդուն գործունեություն: Երևանում Բ. Բ. Պիոտրովսկին ավարտեց իր հայտնի մենագրությունը՝ «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը», որի վրա նա սկսել էր աշխատել դեռևս պաշարված Լենինգրադում:

1944 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայում նա այս աշխատանքը պաշտպանեց որպես դոկտորական դիսերտացիա: Նույն աշխատանքի համար 1946 թ. նրան շնորհվեց ՍՍՀՄ պետական մրցանակ: Այս գրքի բազմաթիվ արժանիքների շարքում նշենք, ինչպես մեզ թվում է, ամենակարևորը՝ գրավոր և հնագիտական աղբյուրների իրավահավասար օգտագործումը: Նոր նյութերով զգալիորեն հարստացված և մասամբ վերաշարադրված գիրքը 1959 թ. ունեցավ իր երկրորդ հրատարակությունը՝ «Վանի թագավորություն» վերնագրով: Այն, ցայսօր, Ուրարտուի պատմության և մշակույթի լավագույն շարադրանքն է և այդ տեսակետից հատկապես կարևոր է հայ ժողովրդի պատմության համար, որովհետև, հեղինակի խոսքերով ասած, «ուրարտացիները ծուլվեցին հայերին, սրոնք ժառանգեցին նրանց մշակույթը»: Թեմատիկորեն այս գրքերի հետ է կապվում նաև Բ. Պիոտրովսկու հաջորդ մենագրությունը՝ «Ուրարտուի արվեստը», որը նրան միջազգային ճանաչում բերեց:

Ուրարտուի պատմության ուսումնասիրումը Պիոտրովսկուն պետք է անխուսափելիորեն կանգնեցներ հայ ժողովրդի հնագույն պատմության և առաջին հերթին հայ ժողովրդի ծագման պրոբլեմների առաջ: 1940-ական թթ. գիտության մեջ իշխում էր հայերի, որպես ձևավորված ժողովրդի, մ. թ. ա. VI դարի սկզբին Բալկանյան թերակղզուց գաղթած լինելու տեսակետը: Այն խարսխված էր բացառապես հունական մատենագրության կարևոր, բայց միակողմանի տեղեկությունների վրա: Հինարևելյան սեպագիր աղբյուրների ճարուստ ժառանգությունը սպասում էր իր հետազոտողին: Կարելի է վստահությամբ պնդել, որ Բ. Բ. Պիոտրովսկին առաջինն էր, որ ուրարտական աղբյուրների, ուրարտական թագավորների արձանագրությունների տվյալները ծառայեցրեց հայ ժողովրդի ծագման խնդրի լուսաբանմանը: Արդյունքը եղավ «Հայ ժողովրդի ծագման ճարցի շուրջը» աշխատությունը, որը 1945 և 1946 թթ. լույս տեսավ հայերեն և ռուսերեն լեզուներով: Սարգոն II թագավորի Վանի սեպագիր արձանագրության ուշագիր ուսումնասիրությունը նրան հանգեցրեց այն եզրակացության, որ մ. թ. ա. VIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում ձևավորվել էր արմենական տեղական իշխանություն՝ Արմե երկրի անվան տակ իր մայրաքաղաքով և իշխանավորներով: Սրանով արմենների պատմության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում հետցվում էր և մ. թ. ա. VI դարից տեղափոխվում էր մ. թ. ա. VIII դար: Ինչպես պարզվեց հետագայում, ժամանակագրական այս սահմանն էլ վերջնական չէր:

Բ. Պիոտրովսկու «Հայ ժողովրդի ծագման ճարցի շուրջը» աշխատությունը և Գ. Ղափանցյանի՝ իր ուշ լույս տեսած «Հայասան-հայերի բնօրրան» մենագրությունը հայ ժողովրդի ծագման պրոբլեմի հետագա մշակման երկար տարիների համար գիտական հուսալի հիմք հանդիսացան:

Ուրարտուի պատմության և մշակույթի ուսումնասիրումը Բ. Պիոտրովսկուն պետք է նաև մղեր դեպի Հայաստանի և Անդրկովկասի հնագույն մշակույթները, որոնց հետազոտման արդյունքները ամփոփվեցին «Անդրկովկասի հնագիտություն» գրքի մեջ: Համալսարանական դասընթացների ձև ունեցող գիրքը ըստ էության երկրամասի հնագույն պատմության գիտական կուռ շարադրանքն է: Հնագիտական գրականության մեջ հազվագյուտ են «Անդրկովկասի հնագիտության» բախտին արժանացած գրքերը: Այն դարձել էր ոչ միայն Անդրկովկասի հնագետների, այլ նաև Անդրկովկասի հնագույն պատմությամբ զբաղվողների սեղանի գիրքը: Կարելի է միայն ափսոսալ, որ գիրքը չտեսավ իր այնքան անհրաժեշտ երկրորդ հրատարակությունը: Այս գրքում առավելապես դրսևորվեցին Բ. Պիոտրովսկու գիտական ոճի առանձնահատկությունները, նրա ազբյուրագիտական խորը, իր ժամանակի համար սպառիչ գիտելիքները, ճակիրն, բայց դիպուկ ձևակերպումներով հագեցված շարադրանքը, ընդհանրացման զարմանալի սանկությունները, լայն մտահորիզոնը:

Ուշադրության արժանի են տեսական բեմաներով գրված Պիոտրովսկու մի շարք աշխատություններ, որոնցում հատկապես քննվում են տնտեսության հիմնական ձևերի՝ երկրագործության և անասնապահության խաղացած դերը և նրանց փոխհարաբերությունները նախնադարյան համայնական հասարակարգում, նրա քայքայման և դասակարգերի ու պետության առաջացման ժամանակաշրջանում: Նման աշխատությունները, հահախ փոքր ծավալի, բայց տեսական մըտքերով առլեցուն, որոշակի արժեք ունեն նաև հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության, դասակարգային հասարակության և պետության ձևավորման հարցերի լուսաբանման համար:

1960-ական թթ. սկզբին Բ. Պիոտրովսկին նորից է վերադառնում եգիպտական թեմատիկային: Ասուանի ջրամբարի կառուցման կապակցությամբ նա ընդգրկվում է եգիպտական հուշարձանների փրկման՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի ձեռնարկած աշխատանքներում և 1961—1963 թթ. ղեկավարում սովետական հնագիտական արշավախմբի գործունեությունը Նեղոսի հովտում: Այդ աշխատանքների արդյունքները ամփոփվեցին «Հին Նուբիա» գրքում: Թութանխամոնի դամբարանի գանձերի ցուցահանդեսի կազմակերպումը էրմիտաժում առիթ հանդիսացավ Բ. Պիոտրովսկու համար՝ նորովի լուսաբանելու Հին Եգիպտոսի կապերը Նուբիայի, Կրետե-Միկենյան աշխարհի ու հին արևելյան երկրների հետ:

Դիտական աշխատանքին զուգահեռ Բ. Պիոտրովսկին զբաղվել է գիտակազմակերպչական գործունեությամբ: Նա երկար տարիներ եղել է Պետական էրմիտաժի դիրեկտորի գիտական գծով տեղակալ, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի վարիչ, Լենինգրադի պետական համալսարանի Հին Արևելքի պատմության և բանասիրության ամբիոնի վարիչ: 1964 թ. սկսած անընդմեջ Բ. Բ. Պիոտրովսկին հանդիսանում է էրմիտաժի դիրեկտորը: Նրա ղեկավարությամբ էրմիտաժը նոր հաջողություններ ունեցավ գիտական և կուլտուր-լուսավորչական աշխատանքների բնագավառում: Այս նույն տարիներին էրմիտաժը դարձավ արտասահմանյան

Երկրների հետ մշակութային կապերի խոշորագույն կենտրոն: Պիոտրովսկու անմիջական մասնակցությամբ էրմիտաժի հավաքածուներն ու գանձերը ցուցադրվել են Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի լավագույն թանգարաններում ու պատկերասրահներում:

Բ. Բ. Պիոտրովսկին արտասահմանյան գիտական մի շարք հաստատությունների անդամ է: Նա հաջողությամբ ներկայացնում է սովետական գիտության նվաճումները արտասահմանում՝ միջազգային գիտաժողովներում և հավաքներում:

Մեծ է Պիոտրովսկու դերը գիտական կադրերի՝ հնագետ-մասնագետների պատրաստման գործում, առավելապես Հայաստանում, որտեղ նրա ավանդը հնագիտության զարգացման մեջ նշանակալից է: Կարմիր բլուրի հնագիտական դպրոցը անցած մասնագետները աշխատում են հանրապետության գիտական և մանկավարժական տարբեր հաստատություններում:

Սովետական գիտության ու մշակույթի առաջընթացին ցույց տված եռանդուն մասնակցության համար, Բ. Բ. Պիոտրովսկին իր 80-ամյակի օրերին արժանացել է «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանին: Այս առիթով մի անգամ ևս շնորհավորենք թանկագին հոբելյարին և ցանկանանք նորանոր հաջողություններ ի փառս սովետական գիտության:

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ